

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3101 «ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչը սահմանում է միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության՝ Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի «տեխնիկ-հողաշինարար» որակավորմանը ներկայացվող պահանջները, հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսանողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալները:
2. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել ուսուցման հետևյալ ձևերով՝
 - 1) առկա
 - 2) հեռակա
 - 3) դրսեկություն (էքստեռնատ):
3. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.
 - 1) կրթության առկա ձևով.
 - ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 3 տարի
 - բ. հիմնական կրթության հիմքով՝ 4 տարի
 - 2) կրթության հեռակա ձևով.
 - ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 4 տարի
 - 3) դրսեկության (էքստեռնատ) ձևով.
կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշման:
4. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 3852 ժամ է, առավելագույն ծավալը՝ 6642 ժամ: Հիմնական կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2.

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3101 «ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

5. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

- 1) երկրաբաշխներ, քարտեզագիրներ և տեղանքագիրներ,
- 2) գյուղատնտեսներ և մասնագետներ՝ հարակից,
- 3) տեխնիկներ՝ արդյունաբերության և քաղաքացիական շինարարության,
- 4) գծագրողներ,
- 5) մասնագետներ՝ գյուղատնտեսության և անտառային տնտեսության,
- 6) խորհրդատուներ՝ գյուղատնտեսության և անտառային տնտեսության:

7. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտությամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.

1) շինարարական օբյեկտները ճշգրիտ բնական տեսքի բերելն ապահովող երկրաբաշխական աշխատանքներ կատարելը, շենքերի ջրանցքների, ճանապարհների շինարարության նպատակով հողահատկացումը հիմնավորելու համար աշխարհագրական նյութեր պատրաստելը,

2) տեղագրական, աշխարհագրական և այլ քարտեզներ, հողային կադաստրեր կազմելու և նորացնելու նպատակով տարբեր մեթոդներով երկրագնդի մակերևույթի տեղանքագրական նկարահանումներ կատարելը, նկարահանումների ժամանակ օգտագործվող գործիքները ստուգելն ու կարգավորելը,

3) երկրաբաշխական և տեղանքագրական աշխատանքներ կատարելու նորագույն մեթոդներ կիրառելը,

4) հողի կառուցվածքը և բաղադրությունը, հողագործության և անտառաբուծության ագրոկլիմայական շրջաններն ուսումնասիրելը, հողերի բերրիության, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման ագրոտեխնիկական միջոցառումներ մշակելը, հակաէրոզիոն և ջրատեխնիկական պարզ կառույցների շինարարությունը,

5) հետազոտություններ կատարելը, վայրի բնությունը պահպանելու և արոտավայրերը խնայողաբար օգտագործելու նոր մեթոդներ մշակելը կամ գործողները կատարելագործելը,

6) շինարարական նյութերի և հողերի նմուշների լաբորատոր ու դաշտային ստուգումներ կատարելը կամ դրանց օգնելը,

7) պարզ նախագծերի մշակմանը մասնակցելը, մասնագրեր և այլ տեխնիկական փաստաթղթեր կազմելը, պարզագույն հաշվարկներ կատարելը,

8) նախագծեր կազմելու համար տվյալներ հավաքելը և պահանջվող նյութերի ու աշխատանքի ծավալը և արժեքը որոշելը, նախագծերի իրացման համար անհրաժեշտ աշխատանքային ու նյութական ծախսերի քանակը և արժեքը մասնագրերին համապատասխան որոշելուն օգնելը,

9) դժվար պատճենահանվող և թվային տվյալներ պարունակող աշխատանքային գծագրեր, քարտեզներ ստեղծելու և փոփոխելու, թվային տեղեկատվություն պարունակող այլ կորագծեր մշակելու համար համակարգչային սարքավորումներ կամ փոխարկման աղյուսակներ օգտագործելը,

10) մասնագիտացման իր բնագավառում ընթերակայելը և գիտափորձեր, փորձարկումներ ու վերլուծություններ կատարելը,

11) տեսական ու գործնական գիտելիքներն աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները բացահայտելու և

լուծելու համար կիրառելը,

12) գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում կիրառվող ժամանակակից մեթոդներին ու տեխնոլոգիաներին, բնական պաշարների և շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներին ու հողի քայքայման դեմ պայքարի խնդիրներին առնչվող խորհրդատվություն մատուցելը,

13) այլ մասնագետների հետ համագործակցությունը և խորհրդատվությունը,

14) պարտականությունների բովանդակային կատարելը:

ԳԼՈՒԽ 3.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3101 «ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

8. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանվում են շրջանավարտին ներկայացվող ընդհանուր պահանջների համաձայն:

9. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է՝

- 1) ունենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական ու գործնական գիտելիքներ,
- 2) դրսևորի աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում գործընկերների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողություն,
- 3) ունենա որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն,
- 4) դրսևորի մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ դիտարկելու, ինչպես նաև քաղաքացիական գիտակցություն ցուցաբերելու կարողություն,
- 5) ունենա մասնագիտական գործունեության գործառույթները սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու հմտություններ,
- 6) ցուցաբերի իր և աշխատակիցների (առկայության դեպքում) մասնագիտական կարիքները գնահատելու և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարողություն,
- 7) ունենա մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն,
- 8) ցուցաբերի մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, դրանցից օգտվելու և դրանք նպատակային օգտագործելու կամ փոխանցելու կարողություն,
- 9) ունենա աշխատակիցների (առկայության դեպքում) աշխատանքները կազմակերպելու կամ գործընկերային հարաբերությունները (լիազորության դեպքում) ըստ կարողությունների և մասնագիտացման համակարգելու հմտություններ,
- 10) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերի ռազմավարական մտեցումների տարրեր կիրառելու կարողություն:

ԳԼՈՒԽ 4.

**ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3101 «ՀՈՂԱՉԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

10. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում են ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների, առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն:

11. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է՝

- 1) իմանա ՀՀ Սահմանադրության, զբաղվածության տվյալ բնագավառը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,
- 2) տիրապետի հայոց լեզվին,
- 3) հաղորդակցվի առնվազն երկու օտար լեզուներով,
- 4) տիրապետի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին,
- 5) գիտելիքներ ունենա ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի վերաբերյալ,
- 6) ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,
- 7) ցուցաբերի կիրառական տնտեսագիտության հիմնադրույթների, մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքների, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունների իմացություն:
- 8) իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությունը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթները,
- 9) պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքին և ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի սույն հրամանով հաստատված աղյուսակ 1-ում բերված մոդուլներով սահմանված առանցքային հմտություններին:

13. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի սույն հրամանով հաստատված աղյուսակ 2-ում բերված մոդուլներով ըստ մասնագիտացումների սահմանված ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողություններին:

**ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3101 «ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

14. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,

2) ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն:

3) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցներ:

16. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի: Դրանց հազեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

- ա. հայոց լեզվի և խոսքի մշակույթի,
- բ. ռուսաց և օտար լեզուների,
- գ. գծագրության,
- դ. տնտեսագիտության,
- ե. գյուղատնտեսական և մելիորատիվ շինարարական մեքենաների,
- զ. ավարտական ամփոփիչ ատեստավորման նախապատրաստման,
- է. համակարգչային:

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

- ա. ուսուցման տեխնիկական միջոցների,
- բ. քիմիայի,

գ. գեոդեզիայի և քարտեզագրության,

դ. էլեկտրատեխնիկայի:

3) Մպորտային համալիր`

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ:

17. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) առկա ուսուցման ձևի համար ուսումնական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն է, իսկ հեռակա, դրսեկության (էքստեռնատ) ձևի համար սահմանվում է ուսումնական պլանով,

2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,

3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանգանցի 54 ժամը` ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,

4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը` առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,

5) հեռակա ուսուցման ձևի դեպքում ուսանողների հետ պարտադիր պարապմունքների տարեկան ծավալը առնվազն 160 ժամ է,

6) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամը,

7) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաներ,

2) պրակտիկայի յուրաքանչյուր տեսակի տևողությունը սույն չափորոշչով սահմանված պրակտիկայի ընդհանուր տևողությանը համապատասխան սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով,

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում է ուսումնական հաստատությունը.

4) ուսումնական պրակտիկաներն անցկացվում են պրակտիկայի ծրագրի կատարման ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում,

5) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնառության ընթացքում բոլոր ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակը ըստ սույն չափորոշչով սահմանված կարողությունների տարրերի նրանց ձեռքբերումների հավաստում ստանալն է,

2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին,

3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով,

4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգել շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշչով 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության «տեխնիկ-հողաշինարար» որակավորմամբ մասնագետի համար սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 6.

ՄԻՋԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3101 «ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՈՂՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու համար հաստատությունը կազմում և հաստատում է առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների, ընտրովի դասընթացի ուսումնական ծրագրերը, կրթության կառավարման պետական լիազորված մարմնի երաշխավորած ձևին համապատասխան ուսումնական պլանը՝ հաշվի առնելով սույն հրամանով հաստատված 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը:

21. Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

1) կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները,

2) պետք է մոդուլների արդյունքներին և դրանց կատարման չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերը մշակելիս հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

3) պետք է առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

4) պետք է միջանկյալ ատեստավորման ընդհանուր շաբաթների սահմաններում որոշի ըստ կիսամյակների այս ատեստավորմանը հատկացվող ժամանակը,

5) պետք է մասնագիտության նկարագրին համապատասխան տվյալ որակավորման ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով՝ կազմի և հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը,

6) օգտվելով երաշխավորված ձևում տրված պարզաբանումներից՝ պետք է կազմի ուսումնական պլանի կիրառման պարզաբանումները,

7) պետք է պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշի ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

8) պետք է սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը:

Հաստատված է

ՀՀ կրթության և գիտության նախարարի
2012թ. մարտի 22-ի N 199-Ն հրամանով

Աղյուսակ 1

Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»		
1.	Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-5-11-001
2.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
3.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
5.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
6.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
7.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, 3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, 4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը, 5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
8.	Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
9.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, 2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է գրույց, արձագանքում է հարցադրումներին,

		<p>3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,</p> <p>4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է,</p> <p>5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:</p>
10.	Ուսումնառության արդյունք 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
11.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,</p> <p>2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,</p> <p>3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,</p> <p>4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,</p> <p>5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,</p> <p>6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,</p> <p>7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:</p>
12.	Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
13.	Կատարման չափանիշներ	<p>1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հաստատիրոջ,</p> <p>2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,</p> <p>3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,</p> <p>6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,</p> <p>7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</p>
14.	Ուսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
15.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),</p> <p>2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,</p> <p>3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</p>

		<p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</p> <p>6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»		
16.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-5-11-001
17.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:
18.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
19.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
20.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
21.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
22.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,</p> <p>2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները,</p> <p>6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:</p>
23.	Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
24.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական),

		<p>2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն),</p> <p>զգ ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,</p> <p>3) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:</p>
25.	Ուսումնառության արդյունք 3	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
26.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները,</p> <p>2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,</p> <p>3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները,</p> <p>4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:</p>
27.	Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
28.	Կատարման չափանիշներ	<p>1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին,</p> <p>2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում,</p> <p>3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,</p> <p>4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն,</p> <p>5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ,</p> <p>6) կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում,</p> <p>7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»		
29.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-5-11-001
30.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի , գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և

		տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները
31.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
32.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
33.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
34.	Ուսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
35.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին 2) տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին, 3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն) 4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը, 5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office), 6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը, 7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից, 8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ , պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում 9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print)
36.	Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
37.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, 2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, 3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, 4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից, 5). կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն,
38.	Ուսումնառության արդյունք 3	Աղյուսակների պատրաստում և խմբագրում

39.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք, 2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ, 3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուններ և այլն) 4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում, 5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:
40.	Ուսումնառության արդյունք 4	Գրաֆիկական խմբագրում և նկարագրում
41.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ, 2) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autosshapes պատուհանի պատրաստի ձևերը, 3) գծագրում է կանոնավոր պատկերներ, 4) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, 5) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները, 6) գծագրում է տեքստային բլոկներ, 7) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:
42.	Ուսումնառության արդյունք 5	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
43.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը, 2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ, 3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, 4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար 5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:
44.	Ուսումնառության արդյունք 6	Համացանցում աշխատելու իմացություն
45.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է « համացանց» հասկացությունը, 2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը, 3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը, 4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),

		<p>5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները</p> <p>6) գրանցվում է էլեկտրոնային փոստում , ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում</p> <p>7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացի (հաղորդագրություն, նամակ և կցորդ):</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»		
46.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԳՀ-5-11-001
47.	Մոդուլի նպատակը	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
48.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
49.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
50.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
51.	Ուսումնառության արդյունք 1	Փնտրել և գտնել աշխատանք
52.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները,</p> <p>2) կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղ(երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները,</p> <p>3) ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV),</p> <p>4) ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը,</p> <p>5) ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:</p>
53.	Ուսումնառության արդյունք 2	Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ
54.	Կատարման	1) ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական

	չափանիշներ	<p>պահանջները,</p> <p>2) հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը,</p> <p>3) ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ,</p> <p>4) առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ,</p> <p>5) ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:</p>
55.	Ուսումնառության արդյունք 3	Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը
56.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը,</p> <p>2) ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները,</p> <p>3) դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման,</p> <p>4) առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում,</p> <p>5) կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:</p>
57.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները
58.	Կատարման չափանիշներ	<p>1) բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>2) բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>3) բացատրում է նախաձեռնողականության և նպատակալացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>4) ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:</p>

Հաստատված է

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2012թ. մարտի 22-ի N 199-Ն հրամանով

Աղյուսակ 2

Միջին մասնագիտական կրթության 3101 «Հողաշինարարություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՑՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄԵԼԻՈՐԱՏԻՎ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՑԱՑՈՒՄ»		
59.	Մոդուլի դասիչը	ՀՂՇ 5 - 11 - 001
60.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլը մշակվել է բարձրորակ հողաշինարար մասնագետներ պատրաստելու, ընդհանուր նշանակության գյուղատնտեսական, մելիորատիվ և շինարարական մեքենաներն ուսումնասիրելու նպատակով: Այն անհրաժեշտ է նաև գյուղատնտեսական, մելիորատիվ և շինարարական մեքենաներին ներկայացվող աշխատանքային հիմնական պահանջներն ու մեքենաների դասակարգման մոտեցումներն ուսումնասիրելու համար:
61.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
62.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
63.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
64.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գյուղատնտեսական մեքենաները
65.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում վար անող և փխրեցնող մեքենաները, 2) ճիշտ է ներկայացնում ցանք կատարող և վնասատուների դեմ պայքարի համար նախատեսված մեքենաները, 3) ճիշտ է ներկայացնում հնձող և կալսող մեքենաները, 4) կարող է տարբեր գյուղատնտեսական աշխատանքների համար կատարել համապատասխան գյուղատնտեսական մեքենաների ճիշտ ընտրություն:
66.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել մելիորատիվ մեքենաները և սարքավորումները
67.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ռոտորային և կոմբինացված խրամուղափորները, 2) ճիշտ է ներկայացնում ջրանցքների հատակը և շեկերը հարթագծող մեքենաները, 3) ճիշտ է ներկայացնում բետոնե և երկաթբետոնե պատյան պատրաստող մեքենաները, 4) ճիշտ է ներկայացնում էկրանապատման և սալահատակման մեքենաները, 5) ճիշտ է ներկայացնում թփահատ և կոճղահան մեքենաները,

		<p>6) ճիշտ է ներկայացնում քարհավաք մեքենաները և սարքավորումները,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում ջրման նախապատրաստող և արհեստական անձրևացման մեքենաներն ու սարքավորումները,</p> <p>8) կարող է տարբեր մեխորատիվ աշխատանքների համար կատարել համապատասխան մեխորատիվ մեքենաների և սարքավորումների ճիշտ ընտրություն:</p>
68.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել շինարարական մեքենաները, սարքավորումները և գործիքները
69.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում առանցքակալների, ճուպանների, զսպանակների, վերականգնիչների և ուժային տեղակայանքների աշխատանքների սկզբունքը,</p> <p>2) կարող է տարբերակել տարատեսակ տրակտորները, ավտոմեքենաները և կարապիկները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում վերամբարձ կռունկներն ու փոխադրիչները,</p> <p>4) կարող է տարբերակել բեռնման և բեռնաթափման մեքենաները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում հողափոր մեքենաները՝ միաշերտի և բազմաշերտի էքսկավատորները, բուլդոզերները, սկրեպերներն ու գլոբները,</p> <p>6) կարող է տարբերակել շաղախաբետոնային խառնուրդ պատրաստող, տեղափոխող և տեղադրող մեքենաները,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում ամրանների պատրաստման մեքենաները,</p> <p>8) կարող է մատնանշել փայտամշակման հաստոցները,</p> <p>9) ճիշտ է ներկայացնում ցցային աշխատանքների համար նախատեսված սարքավորումները,</p> <p>10) կարող է տարբեր շինարարական և մոնտաժային աշխատանքների համար կատարել համապատասխան շինարարական մեքենաների, սարքավորումների ու գործիքների ճիշտ ընտրություն:</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»		
70.	Մոդուլի դասիչը	ՀՂԾ 5 -11-002
71.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլը մշակվել է ուսանողների մոտ հողի մասին ընդհանուր պատկերացում ձևավորելու և նրանց կողմից հողառաջացնող գործոնները, հողի կազմն ու կառուցվածքը, հատկանիշները, աշխարհագրական տեղաբաշխման առանձնահատկությունները, ՀՀ հիմնական հողատեսակները և դրանց տնտեսական նպատակներով յուրացվածության մակարդակն ու օգտագործման ներկա վիճակն ուսումնասիրելու նպատակով:
72.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
73.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

74.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
75.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել «Հող» և «հողմահարում» հասկացությունները, հողառաջացնող հիմնական մայրապարները և դրանց հողմահարման առանձնահատկությունները
76.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է սահմանում «հողե հասկացությունը, 2) ճիշտ է սահմանում «հողմահարումե հասկացությունը, 3) ճիշտ է ներկայացնում հողը, որպես բնական մարմին, 4) ճիշտ է բացատրում մայրապար հասկացությունը և ներկայացնում է հողառաջացնող հիմնական մայրապարները, 5) ճիշտ է մեկնաբանում հողմահարման երևույթը և հողմահարման տեսակները (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական կամ օրգանական), 6) ճիշտ է ներկայացնում հողառաջացնող տարբեր մայրապարների քիմիական, մեխանիկական և հանքաբանական կազմը, 7) ճիշտ է ներկայացնում հողառաջացնող տարբեր մայրապարների հողմահարման առանձնահատկությունները:
77.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել հողառաջացնող հիմնական գործոնները
78.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում հողառաջացնող գործոնների ընդհանուր սխեման, 2) ճիշտ է բացատրում մակերևույթի անհարթությունների (ռելիեֆի) ձևակազմական տարրերի հողառաջացնող դերը, 3) ճիշտ է ներկայացնում տարածքի երկրաբանական հիմքի առանձնահատկությունների հողառաջացնող դերը, 4) ճիշտ է ներկայացնում տարածքի ջրաբանաերկրաբանական առանձնահատկությունների հողառաջացնող դերը, 5) ճիշտ է ներկայացնում բուսածածկույթի հողառաջացնող դերը, 6) ճիշտ է ներկայացնում կենդանի օրգանիզմների հողառաջացնող դերը, 7) ճիշտ է ներկայացնում մարդու տնտեսական գործունեության հետևանքների հողառաջացնող դերը, 8) ճիշտ է մեկնաբանում ժամանակի դերակատարությունը հողառաջացման ընդհանուր գործընթացում:
79.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հողի կազմը և կառուցվածքը
80.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կազմում հողի մորֆոլոգիական (ձևակազմական) պրոֆիլը (ուղղաձիգ կտրվածքը), 2) ճիշտ է պարզաբանում հողի ծագումնաբանորեն փոխկապակցված հորիզոնների հաջորդական դասավորությունը, 3) ճիշտ է չափագրում հողի հզորությունը,

		<p>4) ճիշտ է ներկայացնում հողի երանգավորման կախվածությունը հումուսի քիմիական կազմից,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում հողի կառուցվածքը և կառուցվածքային (ագրեգատային) բաղադրիչները,</p> <p>6) ճիշտ է դասակարգում հողերը՝ ըստ մեխանիկական կազմի և ագրեգատային կառուցվածքի,</p> <p>7) կարող է գնահատել հողերն՝ ըստ մեխանիկական կազմի,</p> <p>8) կարող է տարանջատել հողերի ագրոնոմիական գնահատման սկզբունքներն՝ ըստ ագրեգատային կառուցվածքի:</p>
81.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել հողի հատկանիշները
82.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում հողի օրգանական նյութերը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում հողի ֆիզիկական հատկությունները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում հողի ֆիզիկամեխանիկական հատկությունները,</p> <p>4) կարող է մեկնաբանել հողի ջրային հատկությունները և ջրային վարքը (ռեժիմը),</p> <p>5) ճիշտ է բացատրում հողի օդային հատկությունները և օդային վարքը,</p> <p>6) ճիշտ է պարզաբանում հողի ջերմային հատկությունները և ջերմային վարքը,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում հողի սննդային վարքը,</p> <p>8) կարող է սահմանել «հողի բերրիությունը»,</p> <p>9) ճիշտ է առանձնացնում հողի բերրիության բարձրացման միջոցառումները:</p>
83.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել հողերի աշխարհագրական տեղաբաշխման առանձնահատկությունները և ՀՀ հիմնական հողատեսակների յուրացվածության ժամանակակից պատկերը
84.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում հողերի լայնակի-հորիզոնական տեղաբաշխման առանձնահատկություններն՝ ըստ բնական գոտիների,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում հողերի ուղղաձիգ-վերընթաց տեղաբաշխման առանձնահատկություններն՝ ըստ լանդշաֆտային գոտիների,</p> <p>3) ճիշտ է պարզաբանում տարբեր հողատեսակների յուրացման հնարավորությունները,</p> <p>4) հստակ ներկայացնում և համեմատում է ՀՀ հիմնական հողատեսակների տնտեսական յուրացվածությունը:</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»		
85.	Մոդուլի դասիչը	ՀՂԾ 5 -11- 003
86.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլը մշակվել է Երկրագնդի ներքին կառուցվածքն ու կազմությունը, զարգացման երկրաբանական պատմությունը, մակերեսային և խորքային երևույթները, երկրակեղևի, հատկապես՝ դրա արտաքին թաղանթում պարունակվող

		ստորերկրյա ջրերի ծագումն ու պաշարները, ինչպես նաև ինժեներաերկրաբանական երևույթներն ուսումնասիրելու նպատակով:
87.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
88.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
89.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
90.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել երկրաբանության հիմնական բաժինները
91.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում երկրաբանության ուսումնասիրման առարկան, 2) ճիշտ է ներկայացնում երկրաբանության հիմնական խնդիրները, 3) ճիշտ է ներկայացնում երկրաբանության հիմնական բաժինները. 4) ճիշտ է ներկայացնում ջրաերկրաբանության հիմնական տարրերը, 5) ճիշտ է մեկնաբանում ինժեներաերկրաբանության հիմնական տարրերը:
92.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել երկրագնդի ֆիզիկական հատկությունները
93.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում երկրագնդի ձևի մասին ժամանակակից պատկերացումները, 2) ճիշտ է ներկայացնում երկրագնդի չափերը, 3) ճիշտ է ներկայացնում երկրագնդի խտությունը, 4) ճիշտ է մեկնաբանում երկրագնդի ջերմային վիճակը:
94.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել աշխարհագրական թաղանթի ոլորտային կառուցվածքը
95.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մթնոլորտն (աթմոսֆերան)` ընդհանուր կողմերով, 2) ճիշտ է ներկայացնում ջրոլորտն (հիդրոսֆերան)` ընդհանուր կողմերով, 3) ճիշտ է ներկայացնում քարոլորտն (լիթոսֆերան)` ընդհանուր կողմերով, 4) ճիշտ է ներկայացնում կենսոլորտն (բիոսֆերան)` ընդհանուր կողմերով:
96.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել երկրագնդի ջրաերկրաբանական պայմանները
97.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում ջրի մեծ և փոքր շրջապտույտները, 2) ճիշտ է բացատրում երկրակեղևում ջրի բաշխման առանձնահատկությունները,

		<p>3) ճիշտ է ներկայացնում ստորերկրյա ջրերի ձևավորման եղանակները,</p> <p>4) ճիշտ է դասակարգում ստորերկրյա ջրեր և կարողանում է տարանջատել դրանց տեսակները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում ստորերկրյա ջրերի ֆիզիկաքիմիական հատկությունները:</p>
98.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել երկրագնդի ինժեներաերկրաբանական պայմանները և երևույթները
99.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում մայրապարների դասակարգումն՝ ըստ ֆիզիկամեխանիկական հատկությունների,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում մայրապարների դասակարգումն՝ ըստ առաջացման պայմանների,</p> <p>3) ճիշտ է բացատրում փլուզման և ապարաթափվածքի երևույթները,</p> <p>4) ճիշտ է բացատրում սողանքային և սելավային երևույթները,</p> <p>5) կարող է ապահովել քաղաքացիական և արդյունաբերական կառույցների ու շենքերի համար բավարար նյութեր:</p>
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»		
100.	Մոդուլի դասիչը	ՀՂԾ 5 - 11 - 004
101.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլը մշակվել է գյուղատնտեսությունը՝ որպես տնտեսության արտադրական (կյութական) ոլորտի ընդգծված համալիր ուսումնասիրելու նպատակով: Այն կօգնի ուսանողներին՝ տիրապետել գյուղատնտեսության (երկրագործության և անասնապահության) առանձնահատկություններին, զարգացման հիմնախնդիրներին և ժամանակակից առաջընթացի միտումներին, ինչպես նաև ազգաբնակչությանը գյուղատնտեսական մթերքով ու արդյունաբերական հումքով ապահովելու շարունակաբար աճող պահանջների բավարարման միջոցառումներին:
102.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
103.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
104.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
105.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գյուղատնտեսության նշանակության և գյուղատնտեսական հողահանդակների մշակման խնդիրները ու ձևերը
106.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է պարզաբանում գյուղատնտեսության տեղն ու դերը ՀՀ ազգային տնտեսության ներկայիս կառուցվածքում,</p> <p>2) ճիշտ է մեկնաբանում ագրոարդյունաբերական համալիրի նշանակությունը ՀՀ տնտեսության զարգացման գերակա ուղղությունների շարքում,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական հողահանդակների մշակման գործիքները,</p>

		<p>4) կարող է օգտագործել գյուղատնտեսական հողահանդակների մշակման արդիական գործիքներն ու սարքավորումները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում լեռնալանջերի յուրացման առանձնահատկությունները,</p> <p>6) կարող է բացահայտել հողահանդակների մշակման գործում մակերևույթի հորիզոնական և խորքային մասնատվածության հարուցած դժվարությունները:</p>
107.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ցանքաշրջանառությունների սխեմաները և դասակարգել դրանք
108.	Կատարման չափանիշներ	<p>1) կարող է ներկայացնել ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում երկրագործության և անասնապահության հարաբերակցության փոփոխությունները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում ՀՀ գյուղատնտեսության մասնագիտացման հիմնական ուղղությունները,</p> <p>3) կարող է մեկնաբանել ՀՀ ցանքատարածքների կառուցվածքային փոփոխությունները հետխորհրդային ժամանակաշրջանում,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում ՀՀ-ում կիրառվող ցանքաշրջանառությունների սխեմաները,</p> <p>5) ճիշտ է բացատրում ՀՀ-ում կիրառվող ցանքաշրջանառությունների շրջապտույտի (ռոտացիայի) ավանդական և նշ ավանդական եղանակները:</p>
109.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հողերի բերրիության բարձրացման հիմնական գործոնները
110.	Կատարման չափանիշներ	<p>1) կարող է ներկայացնել հողերի բերրիության բարձրացման կենսաբանական գործոնները,</p> <p>2) կարող է բացատրել հողերի բերրիության բարձրացման ագրոքիմիական գործոնները,</p> <p>3) կարող է մեկնաբանել հողերի բերրիության բարձրացման ագրոֆիզիկական գործոնները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»		
111.	Մոդուլի դասիչը	ՀՂՇ 5 -11- 005
112.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլը մշակվել է գյուղատնտեսության ենթաճյուղերից երկրագործության (բուսաբուծության) կառուցվածքային առանձնահատկությունները և հողը՝ որպես գյուղատնտեսական արտադրության հիմնական միջոց ուսումնասիրելու նպատակով:
113.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
114.	Մուտքային պահանջները	Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂՇ 5–11–004 «Գյուղատնտեսագիտության հիմունքներ» մոդուլը:
115.	Մոդուլի	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների

	գնահատման կարգը	բավարար մակարդակի ապահովումն է:
116.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել դաշտավարության հիմնական գործընթացները
117.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում սերմերի պահեստավորման միջոցառումները, 2) ճիշտ է ներկայացնում սերմերի տեսակավորման միջոցառումները, 3) ճիշտ է ներկայացնում սերմերի որակավորման միջոցառումները, 4) ճիշտ է ներկայացնում սերմերի նախապատրաստումը ցանքին, 5) կարող է մեկնաբանել դաշտային մշակաբույսերի խմբավորման սկզբունքները և խմբերը, 6) ճիշտ է պարզաբանում դաշտային մշակաբույսերի աճեցման ագրոտեխնիկական առանձնահատկությունները և կարողանում է ընտրել համապատասխան տեխնիկական միջոցներ:
118.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել բանջարաբուծության հիմնական առանձնահատկությունները և գործընթացները
119.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում բանջրոստանային մշակաբույսերի ընդհանուր բնութագիրը, 2) ճիշտ է ներկայացնում բանջրոստանային մշակաբույսերի կենսաբանական հատկությունները, 3) ճիշտ է ներկայացնում բաց գրունտի բանջարաբուծության առանձնահատկությունները, 4) ճիշտ է ներկայացնում բաց գրունտի բանջարաբուծության բնագավառում կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումները, 5) ճիշտ է ներկայացնում ծածկված գրունտի բանջարաբուծության առանձնահատկությունները, 6) ճիշտ է ներկայացնում ծածկված գրունտի բանջարաբուծության բնագավառում կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումները, 7) ճիշտ է ներկայացնում բանջարաբուծության ոլորտում կիրառվող քիմիական նյութերն ու պարարտանյութերի տեսակները և մեքենաները:
120.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել պտղաբուծության հիմնական գործընթացները
121.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում պտղահատապտղային բույսերի բուսաբանական նկարագիրը, 2) ճիշտ է ներկայացնում պտղահատապտղային բույսերի խմբավորման սկզբունքները և խմբերը, 3) ճիշտ է ներկայացնում պտղահատապտղային բույսերի բազմացման եղանակները, 4) ճիշտ է ներկայացնում երիտասարդ ծառերի ձևավորման ընթացքը, հասակային շրջանները և էտը, 5) կարող է ընտրել պտղաբերող ծառերի խնամքի և էտման գործիքները, 6) ճիշտ է ներկայացնում պտուղների և հատապտուղների բերքահավաքի ու պահպանման միջոցառումները:

122.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել խաղողագործության հիմնական գործընթացները
123.	Կատարման չափանիշներ	1) կարող է բացատրել խաղողագործության հիմնական առանձնահատկությունները, 2) կարող է ներկայացնել խաղողի այգիների համար հողատկացումների պահանջները, 3) կարող է նկարագրել խաղողի բուսաբանական և կենսաբանական հատկությունները, 4) կարող է տարբերակել խաղողի արդյունագործական և սեղանի սորտերը, 5) կարող է նկարագրել խաղողի մշակության ագրոտեխնիկան, 6) կարող է նկարագրել խաղողի բերքահավաքի կազմակերպման և իրականացման միջոցառումները:
Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը « Ա Ն Ա Մ Ն Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ի Մ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր »		
124.	Մոդուլի դասիչը	ՀՂԾ 5 -11-006
125.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլը մշակվել է բնակչության՝ գյուղատնտեսական մթերքների և արդյունաբերական հումքի նկատմամբ հարաճուն պահանջների բավարարման գործընթացները, անասնապահության զարգացման հիմնախնդիրները, գյուղատնտեսական կենդանիների համար կերի կայուն բազա ստեղծելու միջոցառումները, բնական կերային հողատեսքերի կազմակերպմանը ներկայացվող պահանջներն ուսումնասիրելու նպատակով:
126.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
127.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար, ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂԾ 5-11-005 «Ընդհանուր Երկրագործություն» մոդուլը:
128.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
129.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ՀՀ-ում անասնապահության զարգացման հիմնախնդիրները և գյուղատնտեսական կենդանիների մթերատվության հիմնական ուղղությունները
130.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ՀՀ - ում անասնապահության զարգացման հիմնախնդիրները, 2) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական կենդանիների մթերատվության հիմնական ուղղությունները. կաթնատու, մսատու, ձվատու, բրդատու:
131.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել գյուղատնտեսական կենդանիների պահվածքի ձևերը
132.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական կենդանիների պահվածքի ձևերը. արոտային, մսուրային, արոտամսուրային, 2) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական կենդանիների պահվածքի ձևերի գոտիական բաշխվածությունը ՀՀ

		տարածքում:
133.	Ուսումնասիրության արդյունք 3	Ներկայացնել գյուղատնտեսական կենդանիների արոտների և կերատեսակների նկատմամբ առաջադրվող պահանջները և գյուղատնտեսական կենդանիների կերակրման նորմաները
134.	Կատարման չափանիշներ	1) Ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական կենդանիների արոտների նկատմամբ պահանջները, 2) Ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական կենդանիների կերակրման նորմաները, 3) Ճիշտ է ներկայացնում կերատեսակների նկատմամբ առաջադրվող պահանջները:
135.	Ուսումնասիրության արդյունք 4	Ներկայացնել գյուղատնտեսական կենդանիների նախիրների, հոտերի ու երամակների ձևավորման սկզբունքները և արոտավայրերի արդյունավետ օգտագործման առանձնահատկությունները
136.	Կատարման չափանիշներ	1) Ճիշտ է ներկայացնում նախիրների ձևավորման սկզբունքները, 2) Ճիշտ է ներկայացնում հոտերի ու երամակների ձևավորման սկզբունքները, 3) կարող է նկարագրել արոտավայրերի առավել արդյունավետ օգտագործման համակարգերը, 4) Ճիշտ է ներկայացնում ՀՀ-ում արոտավայրերի օգտագործման արդյունավետության բարձրացմանը միտված ժամանակակից միջոցառումները:
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ»		
137.	Մոդուլի դասիչը	ՀՂՇ 5 - 11 – 007
138.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել տարածական պատկերների կառուցման եղանակների, ինչպես նաև տարածականորեն տրված պատկերներով երկրաչափական բնույթի խնդիրների լուծման եղանակների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ Մոդուլի ուսումնասիրման արդյունքում սովորողները կտիրապետեն նաև գյուղատնտեսական հողատեսքերի գծագրման պայմանական նշաններին:
139.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
140.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
141.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
142.	Ուսումնասիրության արդյունք 1	Ներկայացնել գծագրման համակարգչային տեխնիկայի սկզբունքները, աշխատել գծագրական գործիքներով
143.	Կատարման չափանիշներ	1) Ճիշտ է ներկայացնում գծագրական հիմնական գործիքները, 2) կարող է աշխատել գծագրական գործիքներով,

		3) ճիշտ է կառուցում ուղիղ և թեք գծեր՝ աստիճանական աճման կարգով, 4) ճիշտ է ներկայացնում գծագրման համակարգչային տեխնիկայով աշխատելու սկզբունքներն՝ ըստ AutoCad համակարգչային ծրագրի:
144.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել կետի պրոեկտման, ուղղի պրոեկցիաների կառուցման և հարթությունների պտտման սկզբունքները
145.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կառուցում կետի պրոեկցիան, 2) ճիշտ է կառուցում ուղղի պրոեկցիան, 3) ճիշտ է կառուցում հարթության պրոեկցիան, 4) կարող է կատարել ուղիղ գծի հատվածի պտտում պրոեկցիաների հարթություններին ուղղահայաց առանցքի շուրջը:
146.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել գյուղատնտեսական հողատեսքերի գծագրման պայմանական նշանները
147.	Կատարման չափանիշներ	1) կարող է տուշով պատկերել գյուղատնտեսական հողատեսքերի եզրագծերը, 2) կարող է գունաներկել գյուղատնտեսական հողատեսքերի առանձնացված ուրվագծերը, 3) ճիշտ է գծում համապատասխան պայմանական նշանները, 4) ճիշտ է ներկայացնում հիմնական տառատեսակներն ու տառաձևերը:
148.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել գյուղատնտեսական հողատեսքերի գունավորման սկզբունքները
149.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում գյուղատնտեսական հողատեսքերի գունավորման սկզբունքները՝ համակարգչային տեխնիկայով, 2) կարող է կազմել և ձևավորել հողաշինարարական հատակագծեր:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՈՂԵԶԻԱ»		
150.	Մոդուլի դասիչը	ՀՂԾ 5 -11-008
151.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլը մշակվել է հարթության վրա Երկրագնդի ֆիզիկական մակերևույթի պատկերման, չափագրման և հաշվարկման սկզբունքային մոտեցումներն ուսումնասիրելու նպատակով: Մոդուլի ուսումնասիրման արդյունքում սովորողը կարող է իրականացնել հողաշինարարական աշխատանքներ ժամանակակից արդյունավետ մեթոդներով
152.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
153.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
154.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

155.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գեոդեզիայի ուսումնասիրման առարկան և խնդիրները
156.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գեոդեզիայի ուսումնասիրման առարկան, 2) ճիշտ է ներկայացնում գեոդեզիայի ժամանակակից խնդիրները, 3) ճիշտ է ներկայացնում գեոդեզիական աշխատանքներում կիրառվող գործիքներն ու սարքավորումները, 4) կարող է մեկնաբանել գեոդեզիայի դերն ու նշանակությունը հողաշինարարական աշխատանքներում:
157.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել երկրագնդի ֆիզիկական մակերևույթի վրա կատարվող պարզագույն հանույթները
158.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ցուցադրում երկրաչափագրական գործիքները և կարողանում է օգտվել դրանցից, 2) ճիշտ է ցուցադրում երկրաչափագրական սարքավորումները և կարողանում է օգտվել դրանցից, 3) ճիշտ է կատարում տեղանքի պարզագույն տեղագրական հանույթ, 4) ճիշտ է կատարում տեղանքի պարզագույն դաշտային հանույթ, 5) ճիշտ է կատարում տեղանքի պարզագույն բուսոլային հանույթ:
159.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել գրաֆիկական և մեխանիկական եղանակներով մակերեսների հաշվման սկզբունքները
160.	Կատարման չափանիշներ	1) անալիտիկ եղանակով ճիշտ է հաշվում հողատեսքերի մակերեսները, 2) գրաֆիկական եղանակով ճիշտ է հաշվում հողատեսքերի մակերեսները, 3) մեխանիկական եղանակով ճիշտ է հաշվում հողատեսքերի մակերեսները, 4) պլեթկայի օգտագործմամբ հաշվում է հողատեսքերի մակերեսները, 5) ճիշտ է կազմում հողերի էքսպլիկացիա:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹԵՈԴՈԼԻՏԱՅԻՆ ՀԱՆՈՒՑԹ»		
161.	Մոդուլի դասիչը	ՀՂՇ 5-11-009
162.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել թեոդոլիտի կառուցվածքի, թեոդոլիտային հանույթի կատարման սկզբունքների և թեոդոլիտային հանույթից ստացվող դաշտային նյութերի մշակման վերբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ
163.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
164.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂՇ 5-11-008 «Ընդհանուր գեոդեզիա» մոդուլը:

165.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
166.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել թեոդոլիտի կառուցվածքը և աշխատանքային սկզբունքները
167.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում թեոդոլիտի աշխատանքային մասերը, 2) ճիշտ է ներկայացնում թեոդոլիտից օգտվելու կարգը, 3) ճիշտ է ներկայացնում թեոդալիտային ճիշտ հաշվարկները, 4) ճիշտ է բացատրում թեոդոլիտի դերը չափագրական տարաբնույթ աշխատանքներում:
168.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել թեոդոլիտային հանույթի առաջնահերթությունները
169.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում թեոդոլիտային հանույթի հաջորդական քայլերը, 2) կատարում է հորիզոնական հեռավորությունների և անկյունների ճիշտ չափագրում, 3) կատարում է ուղղաձիգ հեռավորությունների և անկյունների ճիշտ չափագրում, 4) ճիշտ է ներկայացնում գեոդեզիական ուղիղ և հակադարձ խնդիրների լուծման եղանակները:
170.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել գեոդեզիական (երկրաբաշխական) ցանցի կառուցման սկզբունքները
171.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գեոդեզիական ցանցի հիմնական տարրերը, 2) ճիշտ է կազմում տեղանքի գեոդեզիական ցանցը, 3) կարող է գնահատել տեղանքի գեոդեզիական ցանցի հողաշինարարական նշանակությունը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՄԵՆԱՆԻԿԱ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ»		
172.	Մոդուլի դասիչը	ՀՂՇ 5-11-010
173.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել ճարտարագիտական բնահողագիտության, մասնավորապես, ճարտարագիտական բնահողերում առաջացող լարումների որոշարկման առավել նպատակահարմար եղանակների, ինչպես նաև ճարտարագիտական բնահողերի ամրության ու կարողունակության որոշման և հաշվարկման արդյունավետ եղանակների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ
174.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
175.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար, ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂՇ 5-11-003 «Ընդհանուր երկրաբանություն» մոդուլը:

176.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
177.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել բնահողերի հատկությունները և դրանց բարելավման եղանակները
178.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում «բնահողե հասկացությունը», 2) ճիշտ է ներկայացնում բնահողի տեսակները, 3) ճիշտ է բացատրում բնահողի հատկությունները, 4) ճիշտ է պարզաբանում բնահողերում առաջացող լարումների պատճառներն ու բաշխման օրինաչափությունները, 5) ճիշտ է ներկայացնում բնահողերի բարելավման արդյունավետ եղանակները, 6) ճիշտ է բացատրում բնահողերի ամրության և կայունության խախտման պատճառները, 7) ճիշտ է ներկայացնում բնահողերի ամրության և կարողունակության գնահատման եղանակները:
179.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել շինարարական նյութերը և դրանց հատկությունները:
180.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հիմնական շինանյութերի տեսակները, 2) ճիշտ է բացատրում շինանյութերի ֆիզիկական և մեխանիկական հատկությունները, 3) ճիշտ է տարբերակում բնական և արհեստական քարանյութերն ու դրանց կիրառման բնագավառները, 4) ճիշտ է ներկայացնում անօրգանական և օրգանական կապակցող նյութերն ու դրանց կիրառման բնագավառները, 5) կարող է առանձնացնել պլաստմասե և պոլիմերային նյութերն ու դրանց կիրառման բնագավառները:
181.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել բնահողը, որպես շինարարական նյութ
182.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում բնահողը, որպես շինարարական նյութ կիրառելու բնագավառները, 2) ճիշտ է բացատրում շինարարական նպատակներով բնահողի օգտագործման արդյունավետությունը:
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԱԽՈՄԵՏՏՐԱԿԱՆ ԵՎ ՄԵՆՁՈՒԼԱՑԻՆ ՀԱՆՈՒՅԹՆԵՐ»		
183.	Մոդուլի դասիչը	ՀՂԾ 5 -11-011
184.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել տախիոմետրի և կիպրիզելի կառուցվածքի, տախիոմետրական ու մենզոլային հանույթների կատարման սկզբունքների վերաբերյալ գիտելիքներ և դրանցից ստացվող դաշտային ու հաշվարկային նյութերի մշակման կարողություններ:
185.	Մոդուլի տևողությունը	72 ժամ

186.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂԾ 5-11-009 «Թեոդոլիտային հանույթ» մոդուլը:
187.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
188.	Ուսումնաստության արդյունք 1	Ներկայացնել տախեոմետրի և կիպրեզելի կառուցվածքներն ու աշխատանքային սկզբունքները
189.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում տախիոմետրի աշխատանքային մասերը, 2) ճիշտ է ներկայացնում տախիոմետրից օգտվելու կարգը, 3) իրականացնում է տախիոմետրային ճիշտ հաշվարկներ, 4) կարող է տախիոմետրը բերել աշխատանքային վիճակի, 5) ճիշտ է ներկայացնում կիպրեզելի կառուցվածքը, 6) կարող է մենզուլան բերել աշխատանքային վիճակի, 7) իրականացնում է թեքման անկյունների ճիշտ հաշվարկներ:
190.	Ուսումնաստության արդյունք 2	Ներկայացնել տախեոմետրական և մենզուլայն հանույթների առաջնահերթությունները
191.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում տախիոմետրական հանույթի հաջորդական քայլերը, 2) ճիշտ է կատարում տեղանքի մակերևույթի անհարթությունների արտանկարում, 3) ճիշտ է ներկայացնում մենզուլային հանույթի հաջորդական քայլերը, 4) իրականացնում է պլանշետների միաբերում:
192.	Ուսումնաստության արդյունք 3	Ներկայացնել հատակագծերի և պլանշետների կազմման սկզբունքները
193.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում տախեոմետրական հանույթից ստացվող նյութերի մշակման սկզբունքները, 2) ճիշտ է կազմում տեղանքի միջին բեռնվածության տեղագրական քարտեզներ և հատակագծեր, 3) կատարում է հանույթային կետերի խտացում, 4) կատարում է տեղագրական քարտեզների սյունակավորում և անվանահամարակալում:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆԻՎԵԼԻՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»		
194.	Մոդուլի դասիչը	ՀՂԾ 5 -11-012
195.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել պետական նիվելիրացման ցանցի վերաբերյալ գիտելիքներ և նիվելիրացման աշխատանքները կատարելու կարողություններ

196.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
197.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂԾ 5-11-011 «Տախիոմետրական և մենզոլային հանույթներ» մոդուլը:
198.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
199.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել նիվելիրացման աշխատանքների էությունը
200.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ընդհանուր տեղեկություններ նիվելիրացման աշխատանքների մասին, 2) չափագրում է կետի բացարձակ բարձրությունը և այն արտահայտում հատակագծի վրա, 3) ճիշտ է չափագրում կետերի հարաբերական բարձրությունները, 4) ճիշտ է մեկնաբանում պետական նիվելիրացման ցանցի կազմման սկզբունքները:
201.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել նիվելիրների կառուցվածքը և աշխատանքային սկզբունքները
202.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում նիվելիրի կառուցվածքային մասերը, 2) նիվելիրը բերում է աշխատանքային վիճակի, 3) ճիշտ է կատարում նիվելիրային հաշվարկներ, 4) ճիշտ է լրացնում նիվելիրային հաշվեմատյանը:
203.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել նիվելիրային հանույթի միջոցառումները
204.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում տեխնիկական նիվելիրացման աշխատանքներ, 2) ճիշտ է կատարում մակերևույթի նիվելիրացում՝ քառակուսիներով, 3) ճիշտ է կատարում երկայնական և լայնական պիկետաժի նշահարում, 4) ճիշտ է կատարում կորերի պիկետաժի նշահարում:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՑՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ»		
205.	Մոդուլի դասիչը	ՀՂԾ 5-11-013
206.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլը մշակվել է գյուղական բնակավայրերի հատակագծման տեսական հիմունքները, մասնավորապես, գյուղական բնակավայրերի տարբեր գործառնական տարածքների ընտրության կարգն ու նորմաները: Մոդուլի ուսումնասիրման արդյունքում սովորողի մոտ կձևավորվի հատակագծման վրա ազդող շրջակա միջավայրի գործոնների որոշարկման

		կարողություններ, ինչպես նաև հատակագծման նախագծի կազմման սկզբունքային մոտեցումները գործնականում կիրառելու հմտություններ:
207.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
208.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
209.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
210.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել բնակչության թվաքանակի շարժընթացի և հեռանկարային փոփոխման միտումները
211.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է սահմանում «բնակչություն» և «բնակչության շարժ» հասկացությունները, 2) ճիշտ է ներկայացնում բնակչության շարժընթացի վրա ազդող սոցիալական և տնտեսաքաղաքական գործոնները, 3) ճիշտ է բացատրում բնակչության տարաբնակեցման ձևերն ու համակարգերը, 4) ճիշտ է ներկայացնում բնակչության թվաքանակի փոփոխման հեռանկարային պատկերը, 5) ճիշտ է մեկնաբանում գյուղական բնակավայրերի հասարակական դերը:
212.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել գյուղական բնակավայրերի բնակելի ֆոնդի հաշվարկման սկզբունքները
213.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում գյուղական բնակավայրերի բնակելի ֆոնդի կառուցվածքը, 2) ճիշտ է բացատրում բնակելի ֆոնդի հաշվարկման սկզբունքները, 3) կարող է անցկացնել և հստակեցնել հասարակական շենքերի ու կառույցների սահմանները, 4) ճիշտ է որոշում բնակելի և արտադրական գոտիների մակերեսները, 5) ճիշտ է տարանջատում տարածքի գործառնական, բնակելի, արտադրական և կանաչ գոտիները, 6) ճիշտ է բացատրում տարածքի գոտիավորման միավորների ընտրությունն՝ ըստ իրավիճակի:
214.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման նախագծային նորմաները
215.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում բնակելի տների տեղաբաշխման պայմաններն ու նորմաները, 2) ճիշտ է ներկայացնում հասարակական և սոցիալական նշանակության շենքերի և շինությունների տեղաբաշխման պայմաններն ու նորմաները, 3) ճիշտ է կազմում բնակելի գոտու գրաֆիկական նախագիծ, 4) ճիշտ է կազմում արտադրական գոտու գրաֆիկական նախագիծ,

		5) իրականացնում է հատակագծման նախագծի տեխնիկատնտեսական գնահատում, 6) կազմում է հաշվետվություն կատարված նախագծային աշխատանքների վերաբերյալ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ»		
216.	Մոդուլի դասիչը	ՀՂԾ 5-11-014
217.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության և հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման սկզբունքների, հողերի պահպանությունը, հողային օրենսդրության կիրառման սահմանների ու հողօգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացման միջոցառումների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ
218.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
219.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
220.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
221.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հողային իրավունքի աղբյուրները
222.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում հողային իրավունքի հետ առնչվող ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածները, 2) ճիշտ է ներկայացնում հողային իրավունքը կարգավորող ՀՀ հողային օրենսդրությունը, 3) ճիշտ է ներկայացնում հողային իրավունքը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերը:
223.	Ուսումնառության արդյունք 2	Հողային օրենսդրության կիրառման, հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ իրականացվող վերահսկողության իմացություն:
224.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ պետական վերահսկողության խնդիրները, 2) ճիշտ է ներկայացնում հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները, 3) ճիշտ է ներկայացնում մարզպետարանի և համայնքապետարանի, որպես ղեկավարի, իրավասությունները հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ իրականացվող վերահսկողության բնագավառում:
225.	Ուսումնառության	Ներկայացնել հողամասերի սեփականատերերի և օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները

	արդյունք 3	
226.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հողամասերի սեփականատերերի և օգտագործողների իրավունքները, 2) ճիշտ է ներկայացնում հողամասերի սեփականատերերի և օգտագործողների պարտականությունները:
227.	Ուսումնասիրության արդյունք 4	Ներկայացնել պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման գործընթացները
228.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումն իրականացնող լիազոր մարմինները, 2) ճիշտ է ներկայացնում պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման գործընթացը, 3) ճիշտ է ներկայացնում պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքը, 4) ճիշտ է ներկայացնում հողամասերի վաճառքի աճուրդի կազմակերպումն ու իրականացումը:
229.	Ուսումնասիրության արդյունք 5	Ներկայացնել հողային վեճերի լուծման իրավական կարգավորումը
230.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հողամասերի նկատմամբ իրավունքների պաշտպանությունը, 2) ճիշտ է ներկայացնում հողային վեճերի լուծման իրավական կարգավորման սկզբունքները:
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ»		
231.	Մոդուլի դասիչը	ՀՂԾ 5 - 11 - 015
232.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել «աշխարհագրական քարտեզ» և «տեղանքի հատակագիծ» հասկացությունների վերաբերյալ գիտելիքներ և դրանց կիրառման ոլորտները հստակեցնելու, հիմնական տարրերն ուսումնասիրելու և տարբերությունները բացահայտելու, ինչպես նաև պարզ չափագրումներ կատարելու, քարտեզներ ու հատակագծեր ընթերցելու և կազմելու, դրանց վրա պարզ չափագրումներ ու հաշվարկներ կատարելու կարողություններ
233.	Մոդուլի տևողությունը	18 ժամ
234.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
235.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
236.	Ուսումնասիրության արդյունք 1	Ներկայացնել «Աշխարհագրական քարտեզ» և «տեղանքի հատակագիծ» հասկացությունների սահմանումները և դրանց հիմնական տարրերը
237.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում «աշխարհագրական քարտեզ» հասկացությունը, 2) ճիշտ է սահմանում «տեղանքի հատակագիծ» հասկացությունը,

		3) ճիշտ է սահմանում «հորիզոնի» և «ազիմուտի» հասկացությունները, 4) ճիշտ է սահմանում «մասշտաբ» հասկացությունը և տալ դրա և դրա արտահայտչաձևերը. թվային, անվանական, գծային, 5) ճիշտ է ներկայացնում երկրաբաշխական ցանցի (աստիճանացանցի) տարրերը. միջօրեական, գուգահեռական:
238.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել աշխարհագրական քարտեզների դասակարգման սկզբունքները
239.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում քարտեզների դասակարգումն՝ ըստ մասշտաբի, 2) ճիշտ է ներկայացնում քարտեզների դասակարգումն՝ ըստ բովանդակության, 3) ճիշտ է ներկայացնում քարտեզների դասակարգումն՝ ըստ նշանակության, 4) ճիշտ է մեկնաբանում աշխարհագրական քարտեզի պայմանական նշանները:
240.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել աշխարհագրական քարտեզի և տեղանքի հատակագծի տարբերությունները
241.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում քարտեզի վրա մակերևույթի անհարթությունների (ռելիեֆի) պատկերման սկզբունքը, 2) ճիշտ է բացատրում հատակագծի վրա մակերևույթի անհարթությունների պատկերման սկզբունքը, 3) ճիշտ է մեկնաբանում քարտեզի և հատակագծի տարբերություններն՝ ըստ Երկրագնդի մակերևույթի գնդաձևության հաշվառման /անտեսման, հորիզոնի կողմերի արտահայտման, մասշտաբների մեծության ու մանրամասնությունների պատկերման խորության:
242.	Ուսումնառության արդյունք 4	Չափագրել քարտեզի և հատակագծի վրա հեռավորություններն ու մակերեսները
243.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում թվային մասշտաբից անվանական և գծային մասշտաբ ստանալու սկզբունքը, 2) ճիշտ է հաշվարկում քարտեզի և հատակագծի վրա չափագրված հեռավորությունների ու մակերեսների իրական արժեքները:
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ»		
244.	Մոդուլի դասիչը	ՀՂԾ 5-11-016
245.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլը մշակվել է հողաշինարարության հիմունքները և խնդիրները, ՀՀ հողային ֆոնդը, դրա կազմը, արդյունավետ օգտագործման հիմնախնդիրներն ու հողաշինարարության ձևերն ուսումնասիրելու նպատակով:
246.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
247.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂԾ 5-11-013 «Գյուղական բնակավայրերի նախագծում» մոդուլը:

248.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
249.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հողաշինարարության հիմնական դրույթները, խնդիրները և և ժամանակակից ձևերը
250.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում հողաշինարարության հիմնական դրույթները, 2) ճիշտ է ներկայացնում հողաշինարարության խնդիրները, 3) ճիշտ է ներկայացնում հողաշինարարության բովանդակությունը, 4) ճիշտ է սահմանում հողաշինարարության ժամանակակից ձևերը:
251.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ՀՀ հողային ֆոնդի ներկայիս կազմը և ակնկալվող փոփոխությունները
252.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է մեկնաբանում ՀՀ հողային ֆոնդի ներկայիս կազմի առանձնահատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում պահուստային հողերի ներկայիս վիճակը, 3) ճիշտ է մեկնաբանում պահուստային հողերի օգտագործման հեռանկարները:
253.	Ուսումնառության արդյունք 3	Սահմանել հողերի նպատակային և հողատեսքերի գործառնական նշանակությունները
254.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում «հողամասե հասկացությունը», 2) ճիշտ է ներկայացնում հողերի նպատակային նշանակությունը, 3) ճիշտ է ներկայացնում հողատեսքերը և դրանց գործառնական նշանակությունը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»		
255.	Մոդուլի դասիչը	ՀՂԾ 5-11-017
256.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլը մշակվել է ներհամայնքային հողաշինարարության բովանդակությունը և խնդիրները, ներհամայնքային հողաշինարարական նախագծերի օգնությամբ համայնքների հողային ֆոնդի առավել ամբողջական, արդյունավետ ու նպատակային օգտագործման առանձնահատկություններն ուսումնասիրելու նպատակով: Այն կօգնի նաև ուսումնասիրել նախագծերի կազմման կարգը և կատարել տնտեսագիտական հիմնավորումներ:
257.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
258.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂԾ 5-11-014 «Հողային իրավունք» և ՀՂԾ 5-11-016 «Հողաշինարարություն և հողաշինարարական նախագծում» մոդուլները:
259.	Մոդուլի գնահատման	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների

	կարգը	բավարար մակարդակի ապահովումն է:
260.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ներհամայնքային հողաշինարարության բովանդակությունը և խնդիրները
261.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ներհամայնքային հողաշինարարության բովանդակությունը, 2) ճիշտ է ներկայացնում ներհամայնքային հողաշինարարության խնդիրները, 3) ճիշտ է ներկայացնում համայնքի հողային ֆոնդի առավել արդյունավետ ու նպատակային օգտագործման ուղիները:
262.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ցանքաշրջանառությունների տարածքային կազմակերպման մոտեցումները
263.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում ցանքաշրջանառությունների տարածքային կազմակերպման խնդիրները, 2) ճիշտ է կատարում դաշտերի և բանվորական տեղամասերի նախագծում, 3) ճիշտ է կատարում դաշտային ճանապարհների, դաշտապաշտպան անտառաշերտերի և ջրամատակարարման կառուցվածքների տեղաբաշխում, 4) մշակում է հողապաշտպան հակաերոզիոն միջոցառումների քարտացուցակ, 5) կատարում է ցանքաշրջանառությունների տարածքային կազմակերպման արդյունավետության տնտեսական հիմնավորում:
264.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել բազմամյա տնկարկների տարածքային կազմակերպման մոտեցումները
265.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում բազմամյա տնկարկների՝ պտղատու, խաղողի և հատապտղային այգիների տարածքային կազմակերպման խնդիրները, 2) ճիշտ է կատարում տեղամասերի նախագծում, 3) ճիշտ է կատարում այգամիջյան ճանապարհների և այգապաշտպան անտառաշերտերի ու ջրամատակարարման կառուցվածքների տեղաբաշխում:
266.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել բնական կերային հողատեսքերի տարածքային կազմակերպման մոտեցումները
267.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում բնական կերային հողատեսքերի տարածքային կազմակերպման խնդիրները, 2) ճիշտ է նախագծում խոտհարքաշրջանառության և արոտաշրջանառության սխեմաներ, 3) ճիշտ է կատարում նախիրային և անասնահոտային տեղամասերի նախագծում, 4) ճիշտ է նախագծում փոված (զագոնային) արածեցման տեղամասերը:
268.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել նախագիծը բնության մեջ փոխադրելու եղանակներն ու մեթոդները

269.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հողաշինարարական նախագիծը բնության մեջ փոխադրելու եղանակներն ու մեթոդները, 2) ճիշտ է կազմում նախագիծը բնության մեջ փոխադրելու աշխատանքային գծագիր, 3) ճիշտ է կազմում նախագիծը բնության մեջ փոխադրելու հանձնման և ընդունման ակտ, 4) ճիշտ է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐ, ՀՈՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄ»		
270.	Մոդուլի դասիչը	ՀՂԾ 5 –11 - 018
271.	Մոդուլի նպատակը	Մոդուլի ուսումնասիրման արդյունքում սովորողի մոտ ձևավորել հողային կադաստրի խնդիրների, զարգացման փուլերի, հողային կադաստրի վարման հիմնական սկզբունքների, հողերի պետական գրանցման գործառնությունների և հաշվառման հիմնական սկզբունքների, հողերի դասակարգման ձևերի վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
272.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
273.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂԾ 5-11-007 «Հողաշինարարական գծագրություն» և ՀՂԾ 5 -11-014 «Հողային իրավունք» մոդուլները:
274.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
275.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել պետական հողային կադաստրի նպատակը, առարկան և խնդիրները:
276.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում պետական հողային կադաստրի նպատակը և առարկան, 2) ճիշտ է ներկայացնում պետական հողային կադաստրի խնդիրները, 3) ճիշտ է ներկայացնում պետական հողային կադաստրը՝ որպես հողային հարաբերությունների կարգավորման, հողօգտագործման և հողաշինարարության կազմակերպման հիմնական օղակ, 4) ճիշտ է ներկայացնում պետական հողային կադաստրի զարգացման փուլերը ՀՀ-ում:
277.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել պետական հողային կադաստրի վարման հիմնական սկզբունքները, հողերի դասակարգման ձևերը
278.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում պետական հողային կադաստրի վարման հիմնական սկզբունքները, 2) ճիշտ է ներկայացնում հողերի դասակարգման ձևերը:
279.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հողերի պետական գրանցման խնդիրներն ու բովանդակությունը
280.	Կատարման	1) ճիշտ է ներկայացնում հողերի պետական գրանցման խնդիրներն ու բովանդակությունը,

	չափանիշներ	2) ճիշտ է ներկայացնում հողերի պետական գրանցման հիմնական փաստաթղթերը, 3) ճիշտ է ներկայացնում անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականի լրացման կարգը:
281.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել հողերի հաշվառման նշանակությունն ու բովանդակությունը
282.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հողերի հաշվառման նշանակությունն ու բովանդակությունը, 2) ճիշտ է ներկայացնում հողերի հաշվառման հիմնական փաստաթղթերը, 3) ճիշտ է ներկայացնում հողերի հաշվառման ձևերը, 4) ճիշտ է ներկայացնում հողերի քանակական և որակական հաշվառումը:
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ»		
283.	Մոդուլի դասիչը	ՀՂՇ 5 -11- 019
284.	Մոդուլի նպատակը	Մոդուլի ուսումնասիրման արդյունքում սվորողի մոտ ձևավորել քարտեզագրության, քարտեզագրական պրոեկցիաների, քարտեզների մաթեմատիկական հիմքը կազմելու եղանակների, տարածքի մակերևույթի անհարթությունների միագումար համակարգի կամ ռելիեֆի ձևաբանական պայմանների առանձնահատկությունների, քարտեզագրման սկզբունքների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
285.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
286.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար, ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂՇ 5-11-015 «Քարտեզագրություն» մոդուլը:
287.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
288.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հողային ռեսուրսների քարտեզների ու քարտեզագրական ելանյութերը
